ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿ ԵԿԵՂԵՑԻ

«Բիւզանդիոն»ը հաղորդում է, որ հայ հռովմէական-ների պատրիարք Թերզեան Սրբազանը մօտ օրերս կուզևորուի Հռովմ։

Երևսփոխ. ժողովի վերջին նստին կանոնադրութեան քննութեան խնդիր է եղել, Թերզեան սրբազանը համամիտ է գտնուել բայց իւր ներկայութիւնը անհրաժեշտ չէ համարել. իրան փոխանորդող մի Տեղապահ պէտք է կարգի։

ՕՏԱՐ ԵԿԵՂԵՑԻ

Պրաւօսլաւ եկեղեցի.

«Кавказ»-ում (№ 165) կարդում ենք, որ պրաւօսլաւ սրբազնագործ պաշտօնեաների—քահանաների և սարկաւագների—կրկնամուսնութեան խնդիրը նորից յարուցուած է ռուսաց սրբազնագոյն Սինոդում ոչ թէ վերջնականապէս վճռելու, այլ այդ առիթով Սրբ. Սինոդի անդամների կարծիքները իմանալու։ Այդ կարծիքները յետոյ կը զեկուցուեն ի բարեհայեցողութիւն ապագայ եկեղեցական ժողովի։

Յունիսի 25-ին վերջացրել է իւր զբաղմունքները Կազանի միսիոներական ժողովը, որին մասնակցում էի 22 թեմերի ներկայացուցիչներ, իսկ 26-ին Դերմոգեն եպիսկոպոսի և նախագահ Նիկանդր արքեպիսկոպոսի ճառերով ժողովը հրատարակուեց փակուած։

Ժողովի եզրակացութիւնները ամփոփուած են մի կարգ որոշումների մէջ, որ նախապէս մշակել էին զանազան մասնաժողովները։

Թուրքեստանի, Տոբոլի նահանգների և կիրգիզեան